ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1846 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁԱԿՈՒՄ ԲԵՄԱԴՐՎԱԾ ՄԻ ՊԻԵՍԻ ՄԱՍԻՆ

(Նյութեր հայ թատրոնի պատմությունից)

Հայ թատրոնի մարքսիստական պատմությունը գեռևս չի գրված։ Քիչ են ուսումնասիրված հատկապես հայ ազգային թատրոնի սկզբնավորման հետ կապված խնդիրները։

Անշուշտ այս հարցին վերաբերող ամենափոքր եղելություններն անգամ նյութ կարող են տալ հայ թատրոնի պատմությունը շարադրողներին։ Ներկա հաղորդումով ցանկանում ենք խոսել 19-րդ դարի կեսերին Գանձակում կազմակերպված թատերական մի ներկայացման մասին։

Պետական Մատենադարանի արխիվում պահվում է «Արտաշիր թագավոր հայոց» վերնագրով մի պիեսի ձեռագիր մեկ օրինակը։ Գժբախտաբար ձեռագրի վրա չկա որևէ հիշատակություն, թե ով է նրա հեղինակը, Երբ է գրվել և որտեղ։ Միայն պիեսի առաջին էջում կա այսպիսի մի ծանոթագրություն։

«Այս թատերագրությունը առաջին անգամ ներկայացրուավ Գանձակ քաղաքում 1846 ամի, շնորհիվ և աշխատությամբ երջանկահիշատակ Կարապետ վարժապետ Մատինյանցի, որը վերջը հանգավ ի տեր ի 1867 ամի ավագ քահանայության աստիճանումն։

Պիեսի վրա այս մակագրությունը թողել է Ն. Տեր-Ներսիսյանը։ Նա հայտնում է նաև՝ «Այս պիեսի մեջ ես գործակից էի իրրև երգիչ աշակերտ Մատինյանցի»։

Ներսես Տեր-Ներսիսյանի վկայություններից պարզվում է, որ «Արտաշիր թագավոր հայոց» պիեսը 1846 թվականին բեմադրվել է Գանձակում, Կարապետ Մատինյանցի ջանքերով և իր մասնակցությամբ։

Այս փաստերը շատ կարևոր են հայ թատրոնի պատմության համար, որովհետև նրանք Գանձակի հայ թատրոնի սկզբնավորումը մոտ քառորդ դարով ավելի առաջ են տանում, քան կարծում էին մինչև այժմ հայ թատրոնի պատմությամբ զբաղվողները, որոնք, որքան մեզ հայտնի է, Գանձակի թատրոնի սկզբնավորումը համարել են 70-ական թվականներից։ Այդ հիշատակությունները, միաժամանակ երկու նոր անուններ են ավելացնում գավառական թատրոնի հիմնադիրների շարքում՝ Կարապետ Մատինյանցի և Ն. Տեր-Ներսիսյանցի անունները։

Կարապետ Մատինյանցը եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտներից և 1837 թվականին ավարտելով այդ վարժարանը, հենց հաջորդ ուսումնական տարվանից սկսել է դասավանդել այնտեղ հայոց լեզվի քերականություն։ Այնուհետև տեղափոխվել է Գանձակ, ուր շարունակել է իր ուսուցչական պաշտոնը։ Ներսես Տեր-Ներսիսյանը նույնպես Գանձակի թատերասեր հայերից է. այս պիեսը պահվել է նրա գրադարանում, ինչ-

պես երևում է հիշատակությունից, պիեսում նա կատարել է միմոսի դերը. և երգել պիեսի երգերը։

Ո՞րտեղ է գրվել պիեսը։

Հայտնի է, որ այդ թվականներին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սկսվել էր թատերական մի շարժում, որը գլխավորում էր Հ. Ալամդարյանը։ Հետագայում նա ինքն էլ գրել է մի պիես՝ «Հրամիզդ և Զենոբիա» պատմական ողբերգությունը, որի ձեռագիր թերի մի օրինակը պահվում է Պետ. Մատենադարանի արխիվում։

«Արտաշիր թագավոր հայոց» պիեսի առաջաբանից երևում է, որ նրա հեղինակը աշակերտ է, այդ նրա առաջին ստեղծագործությունն է, որը կամենում է ներկայացնել իր ուսուցչին՝ ի նշան երախտագիտության՝ նրանից ստացած կրթության փոխարեն։

Հետևաբար կարելի է ենթադրել, որ պիեսի հեղինակը 1838—39 թվականներին սովորելիս է եղել Ներսիսյան դպրոցում և նույն այդ տարիներին էլ նա աշակերտական տետրակի վրա գրել է ներկա պիեսը, տվել իր ուսուցչին՝ Կարապետ Մատինյանին, իսկ վերջինս այն իր հետ բերել է Գանձակ, կազմակերպել նրա բեմադրությունը։

Պիեսի նյութը վերցված է պատմական անցյալից։ Այն պատկերում է Սասանյան Պարսկաստանի դեմ Արշակունի հայ թագավորության մղած պայքարը։ Պիեսի իդեական բովանդակությունը շատ բանով տարբեր չէ հետագա շրջանի մեր պատմական ողբերգություններում արծարծված գաղափարներից։ Այնտեղ ևս նույն բուրժուական հայրենասիրության գաղափարն է առաջ քաշվում. հեղինակը հիմնական ուշադրությունը բևեռելով «տարերկրյա նվաճողների վրա՝ անտեսում է ներքին շահագործողներին։ Նա հայ ժողովրդի դժբախտության պատճառը չի տեսնում ներքին շահագործման մեջ։ Նա նույնպես, ինչպես շատ լիբերալ հեղինակներ, այն կարծիքին է, որ կան լավ և վատ թագավորներ, և որ Արտաշիրը եթե անձնատուր չլիներ աշխարհիկ կյանքին, խրախճանքներին, ավելի մոտիկից կզբաղվեր երկրի քաղաքական կյանքով, ապա ամեն ինչ լավ կլիներ։

Այստեղ էլ, ինչպես առհասարակ մեր տրագիկոն պատմագրության մեջ, հոգևորական պետը հանդես է գալիս որպես քրիստոնյա ժողովրդի ազատարար, «պաշտպան հայրենյաց»։ Այդպիսին է պիեսի հերոսներից Սահակ Պարթևը։

Պիեսն իր գեղարվեստական արժանիքներով էլ մի բացառիկ երևույթ չէ մեր դրամատուրգիայի պատմության առաջին[1] տասնամյակների համար, չնայած գրված է անհամեմատ ավելի աշխույժ, գործողություններն ավելի կենդանի են ու բնորոշ, քան շատ պատմական պիեսներում։ Պիեսը բաղկացած է չորս գործողություններից, չի բաժանված տեսիլների, չունի ռեմարկային որևէ հիշատակություն. փաստեր, որոնք ցույց են տալիս, որ հեղինակը այնքան էլ ծանոթ չի եղել դրամատիկական գրականությանը։

Ո՞վ է պիեսի հեղինակը։

Պիեսի բեմադրությանը մասնակցած վերոհիշյալ Ն. Տեր-Ներսիսյանը Ալեքսանդր Երիցյանին գրած իր մի նամակում հայտնում է այն կարծիքը,

[1] Ըստ երևույթին այս պիեսի երգերը երգվել են որոշ շրջաններում։ Պետ. Մատենադարանի № 7670 ձեռագրում ընդօրինակված է միմոսի երգերից մի հատված։ Ձեռագրի ժամանակը անհայտ է։

որ պիեսի հեղինակը անհայտ է և ենթադրում է, որ այն կարող է լինել Հ. Կարենյանը։

Սակայն որևէ հիմք չկա այդ ենթադրությունը ճիշտ համարելու։ Նախ Հ. Կարենյանը այդ թվերին արդեն ուսուցիչ էր Ներսիսյան վարժարանում և ծանոթ անձնավորություն, եթե նա լիներ հեղինակը, ապա Տեր-Ներսիսյանը Կարապետ Մատինյանից կարող էր լսել նրա անունը։ Միայն մի անծանոթ աշակերտի անուն կարող էր մոռացության տրվել հենց պիեսի բեմադրության օրերին։

Բացի այդ՝ Կարենյանի ձեռագրերի օրինակները պահվում են Պետ. Մատենադարանում։ Չկա որևէ նմանություն Կարենյանի և խնդրո առարկա պիեսի ձեռագրի միջև։ Եվ, վերջապես, Կարենյանը հնարավորություն է ունեցել իր պիեսների մեծագույն մասը հրապարակ հանելու և կարող էր այդ ևս հրատարակել, կամ որևէ տեղ հիշատակել նրա մասին։

Մերժելով Հ. Կարենյանի հեղինակ լինելու մասին ենթադրությունը, մենք առայժմ չենք կարող որևէ ճշտված կարծիք հայտնել «Արտաշիր թագավոր հայոց» պիեսի հեղինակի իսկության մասին։ Կարելի է ենթադրել միայն, որ այն պետք է լինի 1838—39 թվականներին Ներսիսյան պպրոցի բարձր դասարաններում սովորող որևէ աշակերտ։

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ